ռապանս վչտաց, քանի՞ արդեօք միաբան եղբայրութիւն ձեր, զոր աչօք տեսանէք զիսեղճ և զողորմելի կեանս ձեր, և թէպէտ 'ի վերայ այսր ցաւոց յաւելաք և զցաւ ելանելոյ Ս. Հօր ձեր և մեր եղբօր յԱթոռոյն, սակայն մի բերիցէք 'ի միտս ձեր մնալ իբր որբ առանց Պատրիարքի, զի գալ նորին ոչէ հրաժարիլ յիշխանութենէ, այլ խորհիլ ընդ ազգին զկարեւորսն եւ զբարին տնօրինել։ Որպէս պատահեալ է առաջին Պատրիարքաց, զի յաղաղակել նոցա առ ազգն, արձակեցան 'ի լծոյ տառապանաց։ Մի լիցի ոմանց միաբանաց զայլ և այլ խորհուրդս ածել զմտաւ, և տալ մըտացածին մեկնութիւնս տնօրէնութեան և կամաց ազգին, և կամ չյաժարիլ գալստեան նորին, զի վերջինն չար լինի քան զառաջինն, և ազգն այնուհետեւ չյիշէ զանուն Աթոռոյն, և յետս կասի 'ի գործոց և յօգտակար տնօրէնութենէ նորին։ Որք ցանկացողքդ էք շինութեան եւ պայծառութեան Աթոռոյդ. ուրեմն խնդրեմք սիրով եւ քաղցրութեամբ ճանապարհորդ առնել զՍրբազանն ըստ հրամանի Տէրութեան և Ազգին, եւ դուք կանխել արթնութեամբ 'ի պաշտօն Աթոռոյն, և անլուծանելի սիրով միանալ ընդ ազգընտիր Խորհրդականս, որք հարկադրեալ են զամենայն կառավարութիւնս բարւոք դնել 'ի գործ ըստ ազգային կանոնադրութեանց, և հպատակ կալ նոցին սիրով և յաժարութեամբ, որոց և ձեզ միանդամայն յետ սակաւ աւուրց ունին առաքել առ ձեզ զնախկին Պատրիարք Պօղոս և Ծերունազարդ Մարկոս Արք Եպիսկոպոսունս 'ի Ս. Աթոռն մխիթարել զձեզ մինչեւ դարձցի առ ձեզ հովիւն ձեր, (1824. 'ի 23 Յունիսի)։

Գրեաց եւ առ Խորհրդականս քաջալեր բանիւք արիանալ և զօրանալ ընդդէմ դառնութեան ժամանակին, եւ իբրեւ բազմավաստակ հոգեւոր մշակս գործել յայդի Տեառն զօրութեանց. ապա յայտ առնէ նոցա զտնօրէնութիւն ազգին, տանել Արքունի հրովարտակաւ զԳաբրիէլ Պատրիարք 'ի Կոստանդինուպոլիս. զի և ինքեանք սիրով եւ խաղաղութեամբ ճանապարհորդեսցեն զնա, և փոյթ կալցին զի մի ծագեսցի գժտութիւն եւ վրդովումն ինչ, որպէս եւ 'դրեալ էր առ նոյն ինքն Գաբրիէլ աներկմիտ խնդութեամբ ելանել 'ի քաղաքէն, և յանձնել Խորհրդա-